ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Լ/9

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N2043-Լ որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամին անհրաժեշտ լսարանային, լաբարատոր և գրասենյակային գույքի ձեռքբերման համար «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամին տրամադրել՝ **156 520 200** (մեկ հարյուր հիսունվեց միլիոն հինգ հարյուր քսան հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

## 3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պետական մարմին | Կազմակերպություն |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011040145<br>ՀՎՀՀ 02698732<br>Գլխավոր քարտուղար՝<br><br>Գ. Սաֆարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամ<br>Ք.Վանաձոր, Ուսանողական 9<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչության<br>Հ/Հ 900238000567<br>ՀՎՀՀ 06927275<br>Տնօրեն՝<br><br>Վ. Սիմոնյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի -ին
կնքված N 2043 -Ն/9 պայմանագրի

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառումներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնա-ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնարտադրական բազայով ապահովում | «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամին անհրաժեշտ լսարանային, լաբարատոր և գրասենյակային գույքի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի | Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով | Նոր լսարանային, լաբարատոր և գրասենյակային գույքով ապահոված քոլեջ | 01.09.2023թ. | 156 520 200 |
| | | **Ընդամենը՝** | | | | **156 520 200** |

**Պետական մարմին**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

**Կազմակերպություն**
«Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամ
Ք.Վանաձոր, Ուսանողական 9
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900238000567
ՀՎՀՀ 06927275
Տնօրեն՝

Վ. Սիմոնյան
(ստորագրություն)

Հավելված 2
2022 թ. դեկտեմբերի -ին
կնքված N 2043 -Ն/9 պայմանագրի

**«Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ**

| N/N | *Անվանում* | *Քանակ* | *Ընդամենը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|---|
| | «Կենսաբանություն և բնագիտություն» մասնագիտական առարկայի ուսումնական լսարան | | **12,061,300** |
| 1 | Լաբորատոր կզզի սեղան «СЛ-14.3». | 1 | |
| 2 | Սեղան՝ փործարկումների համար | 1 | |
| 3 | Հավաքածու ջրի զտման և մաքրման գործնական աշխատանքի համար | 1 | |
| 4 | Ստերեո մանրադիտակ | 3 | |
| 5 | Ակնապակու ցանց | 10 | |
| 6 | Առարկայակիր ապակի | 5 | |
| 7 | Ծածկապակի | 5 | |
| 8 | Պաստյորի պիպետ, Պլաստիկ | 100 | |
| 9 | Սպիրտայրոց | 5 | |
| 10 | Մանրէաբանական ասեղ | 40 | |
| 11 | Պետրիի թասիկներ | 5 | |
| 12 | Պետրիի թասիկներ 100/20 | 3 | |
| 13 | Պետրիի թասիկներ | 3 | |
| 14 | Պետրիի թասիկներ | 3 | |
| 15 | Ապակե բաժակ, հրակայուն | 1 | |
| 16 | Փործանոթ | 50 | |
| 17 | Հավանգ և ծեծիչ | 15 | |
| 18 | Ապակե պիպետ 2մլ, 5մլ, 10մլ | 3 | |

| | | | |
|---|---|---|---|
| 19 | Տանձիկ | 40 | |
| 20 | pH շերտիկ | 2 | |
| 21 | Ջերմաչափեր | 10 | |
| 22 | Խոշորացույց (ոսպնյակ | 20 | |
| 23 | Էպենդորֆի փորձանոթներ | 1 | |
| 24 | Ապակե անոթ | 3 | |
| 25 | Հերձման գործիքների հավաքածու | 5 | |
| 26 | Հերձման թաս | 10 | |
| 27 | Էպենդորֆի փորձանոթներ | 2 | |
| 28 | Ապակե անոթ | 3 | |
| 29 | Թերմոստատ | 1 | |
| 30 | Էլեկտրաֆորեզ սարք | 1 | |
| 31 | Թվային կշեռք | 1 | |
| 32 | pH-մետր | 1 | |
| 33 | Ցենտրիֆուգ | 1 | |
| 34 | Ջրաբաղնիք | 1 | |
| 35 | Մագնիսական խառնիչ | 1 | |
| 36 | Դյուրակիր վորտեքս խառնիչ | 1 | |
| 37 | Բինօկուլյար մանրադիտակ | 1 | |
| 38 | Լաբորատոր սառնարան | 1 | |
| 39 | Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք 1 | | |
| 39.1 | Ուսանողական գրասեղան | 10 | |
| 39.2 | Ուսանողական աթոռ | 20 | |
| 39.3 | Ուսուցչի գրասեղան | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| **39.4** | Ուսուցչի աթոռ | 1 | |
| **39.5** | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| **39.6** | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| **39.7** | Ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան | 1 | |
| **40** | <u>Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք 2</u> | | |
| **40.1** | Ուսանողական գրասեղան | 20 | |
| **40.2** | Ուսանողական աթոռներ | 40 | |
| **40.3** | Ուսուցչի գրասեղան | 2 | |
| **40.4** | Ուսուցչի աթոռ | 2 | |
| **40.5** | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված պահարան | 4 | |
| **40.6** | Ցուցադրման շարժական սեղան | 2 | |
| | **«Հողերի առողջություն, բույսերի առողջություն և ագրոնոմիա» մասնագիտական առարկայի ուսումնական լսարան** | | **20,091,600** |
| 1 | Լաբորատոր օդաքաշ պահարան «ЛК-900 ШВ». | 1 | |
| 2 | Լաբորատոր կղզի սեղան «СЛ-14.3». | 1 | |
| 3 | Սպիտակ գրատախտակ | 1 | |
| 4 | Հողի արագ անալիզի գործիքների հավաքածու՝ Լիտվինով՝ «ПЛЛ-9» | 1 | |
| 5 | Հողի անալիզի գործիքների ամբողջական հավաքածու՝ «SKW500» | 2 | |
| 6 | Թերմոստատ | 1 | |
| 7 | Էլեկտրաֆորեզ սարք | 1 | |
| 8 | Թվային կշեռք | 1 | |
| 9 | pH-մետր | 1 | |
| 10 | Ցենտրիֆուգ | 1 | |
| 11 | Ջրաքաղնիք | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Ջրի թորման սարք | 1 | |
| 13 | Էլեկտրահաղորդականության չափման միջոց | 1 | |
| 14 | Մագնիսական խառնիչ | 1 | |
| 15 | Դյուրակիր վորտեքս խառնիչ | 1 | |
| 16 | Հողի խոնավության սենսորային տվիչ | 4 | |
| 17 | Խոնավաչափ | 4 | |
| 18 | Նիտրատոմետր | 4 | |
| 19 | Խոշորացույցի հավաքածու | 4 | |
| 20 | Սեղանի խոշորացույց՝ լուսավորող սարքով | 4 | |
| 21 | Բինօկուլյար մանրադիտակ | 1 | |
| 22 | Առարկայակիր ապակի | 5 | |
| 23 | Ծածկապակի | 5 | |
| 24 | Պաստյորի պիպետ, Պլաստիկ | 100 | |
| 25 | Սպիրտայրոց | 5 | |
| 26 | Մանրէաբանական ասեղ | 40 | |
| 27 | Պետրիի թասիկներ | 5 | |
| 28 | Պետրիի թասիկներ 100/20 | 3 | |
| 29 | Պետրիի թասիկներ | 3 | |
| 30 | Պետրիի թասիկներ | 3 | |
| 31 | Ապակե բաժակ, հրակայուն | 1 | |
| 32 | Փորձանոթ | 50 | |
| 33 | Հավանգ և ծեծիչ | 15 | |
| 34 | Ապակե պիպետ 2մլ, 5մլ, 10մլ | 3 | |
| 35 | Տանձիկ | 40 | |
| 36 | pH շերտիկ | 2 | |
| 37 | Ջերմաչափեր | 10 | |
| 38 | Էպենդորֆի փորձանոթներ | 1 | |
| 39 | Ապակե անոթ | 3 | |
| 40 | Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք 1 | | |

| | | | |
|---|---|---|---|
| 40.1 | Ուսանողական գրասեղան | 10 | |
| 40.2 | Ուսանողական աթոռ | 20 | |
| 40.3 | ուսուցչի գրասեղան | 1 | |
| 40.4 | ուսուցչի աթոռ | 1 | |
| 40.5 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 40.6 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 40.7 | ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան /տումբա/ | 1 | |
| 41 | <u>Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք 2</u> | | |
| 41.1 | Ուսանողական գրասեղան | 20 | |
| 41.2 | Ուսանողական աթոռներ | 40 | |
| 41.3 | Ուսուցչի գրասեղան | 2 | |
| 41.4 | Ուսուցչի աթոռ | 2 | |
| 41.5 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված պահարան | 4 | |
| 41.6 | Ցուցադրման շարժական սեղան | 2 | |
| | **«Քիմիա և կենսաքիմիա» մասնագիտական առարկայի ուսումնական լսարան** | | **6,860,500** |
| 1 | Լաբորատոր օդաքաշ պահարան «ЛК-900 ШВ». | 1 | |
| 2 | Լաբորատոր կղզի սեղան «СЛ-14.3». | 1 | |
| 3 | Սեղան փորձարկումների համար | 1 | |
| 4 | Պատի՝ քիմիային առնչվող պաստառներ | 1 | |
| 5 | Սպիտակ գրատախտակ | 1 | |
| 6 | <u>Քիմիական փորձարկումների համար նախատեսված գործիքներ և նյութեր</u> | | |
| 6.1 | Թվային կշեռք | 2 | |
| 6.2 | Ֆիլտրի թուղթ | 50 | |
| 6.3 | Մագնիսական խառնիչ տաքացուցիչով | 1 | |
| 6.4 | Թվային ջերմաչափ | 1 | |
| 6.5 | Ջերմաչափ | 2 | |
| 6.6 | Մետաղյա գդալ | 4 | |
| 6.7 | Շպատել | 8 | |
| 6.8 | Ռետինե խողովակ | 2 | |
| 6.9 | Բյուրետ, 50 մլ | 5 | |
| 6.10 | Ավտոմատ ջրի թորման սարք | 1 | |
| 6.11 | Ակնոցներ ալկոհոլային թունավորումների նմանակման համար | 5 | |

| | | | |
|---|---|---|---|
| 6.12 | Ունիվերսալ լակմուսային թուղթ | 5 | |
| 6.13 | Ֆիլտրման համար նախատեսված ստենդ (հարմարանք) | 2 | |
| 6.14 | Մետաղյա լաբորատոր կալանի համար նախատեսված սեղմակով օղակ | 5 | |
| 6.15 | Մետաղյա լաբորատոր կալան (տակդիրով և ծողով) | 5 | |
| 6.16 | Սկուտեղ | 5 | |
| 6.17 | Կողային միացումով (խողովակով) կոլբ 250 մլ | 2 | |
| 6.18 | Դյուարի անոթ | 2 | |
| 6.19 | Կաթոցիկներ 3 մլ, | 3 | |
| 6.20 | Կաթոցիկներ, PE, 1մլ, | 3 | |
| 6.21 | Կլոր փորձանոթ | 4 | |
| 6.22 | Կլորհատակ փորձանթ | 4 | |
| 6.23 | Կլորհատակ փորձանոթ | 4 | |
| 6.24 | Էլենմեյերի կոլբ | 6 | |
| 6.25 | Էրլենմեյերի կոլբ | 2 | |
| 6.26 | Չափիչ կոլբ | 5 | |
| 6.27 | Չափասրվակ (մենզուրկա) | 2 | |
| 6.28 | Երկգլխիկավոր կլոր կոլբ | 1 | |
| 6.29 | Կլոր կոլբ | 1 | |
| 6.30 | Կլոր փորձանոթ, 100 մլ | 5 | |
| 6.31 | Սեղմակ | 5 | |
| 6.32 | Թորման կամուրջ | 2 | |
| 6.33 | Տաքացուցիչ փորձանոթ | 5 | |
| 6.34 | Փորձանոթ տեղադրելու թաթ մետաղյա կալանի համար | 7 | |
| 6.35 | Բռնակով սեղմակ մետաղյա կալանի համար | 5 | |
| 6.36 | Չափիչ գլան | 5 | |
| 6.37 | Փորձանոթի խոզանակ | 3 | |
| 6.38 | NS կոնածև խցափակիչ | 5 | |
| 6.39 | Փորձանոթ | 2 | |
| 6.40 | Փորձանոթ՝ կողային գազատար խողովակով | 15 | |
| 6.41 | Բաժանիչ ձագար | 3 | |
| 6.42 | Գոլորշիացման համար նախատեսված թաս | 2 | |
| 6.43 | Գոլորշիացման համար նախատեսված թաս | 3 | |
| 6.44 | Կենսաքիմիայի դասերի համար մոլեկուլային կոնստրուկցիաների հավաքածու (գնդածողային) | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 6.45 | Փործ անելու ձագար | 2 | |
| 6.46 | Բունսենի այրիչ | 10 | |
| 7 | Թվային pH-մետր | 1 | |
| 8 | Մուֆելային վառարան | 1 | |
| 9 | Օդակաձև կանգնակների հավաքածու քիմիական լաբորատորիայի համար | 3 | |
| 10 | Հաղորդաչափ «HI2003-02» | 1 | |
| 11 | Սպեկտրաֆոտոմետր «С ПЭ-5400ВИ» | 1 | |
| 12 | Չորացնող պահարան «ШС-80-01-СПУ» | 1 | |
| 13 | <u>Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք</u> | | |
| 13.1 | Ուսանողական գրասեղանից | 10 | |
| 13.2 | Ուսանողական աթոռ | 20 | |
| 13.3 | ուսուցչի գրասեղան | 1 | |
| 13.4 | ուսուցչի աթոռ | 1 | |
| 13.5 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 13.6 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 13.7 | ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան /տումբա/ | 1 | |
| | **«Ֆիզիկա եվ մեխանիկա» մասնագիտական առարկայի համար ուսումնական լսարան** | | **5,833,800** |
| 1 | Լաբորատոր օդաքաշ պահարան «ЛК-900 ШВ». | 1 | |
| 2 | Լաբորատոր կղզի սեղան «СЛ-14.3». | 1 | |
| 3 | Պատի՝ ֆիզիկային և մեխանիկային առնչվող պաստառներ | 1 | |
| 4 | Սպիտակ գրատախտակ | 1 | |
| 5 | Սեղան փորձարկումների համար | 1 | |
| 6 | <u>Ֆիզիկայի ոլորտում փորձարկումներ կատարելու համար նախատեսված գործիքներ</u> | | |
| 6.1 | Պտտման սարք | 1 | |
| 6.2 | Թեքահարթակ | 1 | |
| 6.3 | Օդուղի | 1 | |
| 6.4 | Օդի հոսքի գեներատոր | 1 | |
| 6.5 | ֆոտոչափումների սարք | 1 | |
| 6.6 | Հաստատուն և փոփոխական լարման էլեկտրասնուցիչ սարք | 1 | |
| 6.7 | Դիմադրության չափման սարք | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 6.8 | Հաստատուն հոսանքի էլեկտրասնուցիչ | 1 | |
| 6.9 | Էլեկտրաստատիկ սարքավորումների հավաքածու | 1 | |
| 6.10 | Էլեկտրաէներգիայի և մագնիսականության փորձերի հավաքածու | 1 | |
| 6.11 | Սնուցման բլոկ փորձերի համար | 1 | |
| 6.12 | Էլեկտրափործարկումների հավաքածու | 1 | |
| 6.13 | Ռեոստատ 10 Ohm | 5 | |
| 6.14 | Թվային մուլտիմետր | 5 | |
| 6.15 | Հիմնական օպտիկական փործերի հավաքածու | 1 | |
| 6.16 | Բևեռացման փործերի հավաքածու | 1 | |
| 6.17 | Միջամտող փործերի հավաքածու | 1 | |
| 6.18 | Վիմշուրստի սարք | 1 | |
| 6.19 | Կունդտի խողովակ | 1 | |
| 6.20 | Հենակալ, կոթառ և սեղմակ | 5 | |
| 6.21 | Կոնդենսատորնե | 5 | |
| 6.22 | Անջատիչ | 5 | |
| 6.23 | Ապակե ափսե | 5 | |
| 6.24 | Ուսումնական կշռաքարեր | 5 | |
| 6.25 | Գլանաև գավաթ | 5 | |
| 6.26 | Մետաղական գնդակներ | 10 | |
| 6.27 | Կիսահաղորդիչ դիոդ | 10 | |
| 6.28 | Ռեզիստորներ | 10 | |
| 6.29 | Պտուտակաձև զսպանակներ | 10 | |
| 6.30 | Լամպեր | 20 | |
| 6.31 | Դիֆրակցիոն ճաղավանդակ | 5 | |
| 6.32 | AC / DC 4.5V լաբորատոր էլեկտրամատակարարում | 5 | |
| 6.33 | Ռառուցիկ ոսպնյակներ | 10 | |
| 6.34 | Մագնիսական ասեղ կամ կողմնացույց | 10 | |
| 6.35 | Միացման հաղորդալարերի և ատամնավոր ամրակների հավաքածու | 3 | |

| | | | |
|---|---|---|---|
| 6.36 | Սոլենոիդներ միջուկներով | 10 | |
| 6.37 | Լար՝ նիկրոմ կամ կոնստանտան | 10 | |
| 6.38 | Պայտաձև մագնիս | 2 | |
| 6.39 | Պղնձե էլեկտրոդներ | 10 | |
| 6.40 | Ռեոստատ | 10 | |
| 6.41 | Փայտե բլոկներ ՝շփման փորձերի համար | 10 | |
| 6.42 | Քանոն միլիմետրի սանդղակով | 2 | |
| 6.43 | Երկար ձողային ջերմաչափ | 2 | |
| 6.44 | Կալորիմետրային գլան, Al | 10 | |
| 6.45 | Ձողակարկին | 3 | |
| 6.46 | Միկրոմետր | 1 | |
| 6.47 | Դինամոմետր | 2 | |
| 6.48 | Համակցված վակուումային կամ ճնշման պոմպ | 1 | |
| 6.49 | Լծակ | 1 | |
| 6.50 | Կալորիմետրային բալոնների հավաքածու | 1 | |
| 6.51 | Բարձր լարման էլեկտրական զարկերակային գեներատոր | 1 | |
| 6.52 | Կիսահաղորդիչներ | 5 | |
| 6.53 | Էլեկտրոսկոպ | 1 | |
| 7 | Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք | | |
| 7.1 | ուսանողական գրասեղան | 10 | |
| 7.2 | ուսանողական աթոռ | 20 | |
| 7.3 | ուսուցչի գրասեղան | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 7.4 | ուսուցչի աթոռ | 1 | |
| 7.5 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 7.6 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 7.7 | ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան | 1 | |
| | **«Գյուղացիական տնտեսության կազմակերպում և էկոնոմիկա» մասնագիտական առարկայի համար ուսումնական արհեստանոց** | | **20,464,900** |
| 1 | Սպիտակ գրատախտակ | 1 | |
| 2 | Ինտերակտիվ գրատախտակ | 1 | |
| 3 | Դյուրակիր «LCD» պրոյեկտոր | 1 | |
| 4 | Համակարգիչ բոլորը մեկում | 28 | |
| 5 | Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք | | |
| 5.1 | Ուսանողական գրասեղան | 10 | |
| 5.2 | Ուսանողական աթոռներ | 20 | |
| 5.3 | Ուսուցչի գրասեղան | 1 | |
| 5.4 | Ուսուցչի աթոռ | 1 | |
| 5.5 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված պահարան | 2 | |
| 5.6 | Ցուցադրման շարժական սեղան | 1 | |
| | **«Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտական առարկայի համար ուսումնական արհեստանոց** | | **43,431,700** |
| 1 | Պատի՝ գյուղատնտեսության մեքենայացման պաստառներ | 1 | |
| 2 | Տրակտոր | 1 | |
| 3 | Սպիտակ գրատախտակ | 1 | |
| 4 | Ռոտորային հնձիչ | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Ռոտորային քաղհանիչ | 1 | |
| 6 | «Տրակտորի վարորդ» սիմուլյատոր /տրենաժոր/ | 1 | |
| 7 | «Տրակտորի շարժիչը մասնատված» ստենդ | 1 | |
| 8 | «Տրակտորի շարժիչ՝ մասնատված, էլեկտրամեխանիկական շարժաբերով» ստենդ | 1 | |
| 9 | ««Տրակտորի առջևի տանող կամրջակ» ստենդ | 1 | |
| 10 | «Տրակտորի հետին տանող կամրջակ» ստենդ | 1 | |
| 11 | «Տրակտորի փոխանցման տուփ» ստենդ | 1 | |
| 12 | «Տրակտորի անիվ՝ մասնատված» ստենդ | 1 | |
| 13 | «Տրակտորի կցանք» ստենդ | 1 | |
| 14 | «Տրակտորի՝ հիդրոստատիկ ուժեղարարով ղեկանիվի արատորոշում» ստենդ | 1 | |
| 15 | Տրակտորի տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար նախատեսված գործիքների հավաքածու | | |
| 15.1 | Փականագործական գործիքներ | 10 | |
| 15.2 | Արանքաչափ | 5 | |
| 15.3 | Պարուրաչափ | 5 | |
| 15.4 | Շաղափների կոմպլեկտ | 5 | |
| 15.5 | Անցքալայնիչներ | 5 | |
| 15.6 | Մուլտիմետր | 5 | |
| 15.7 | Ձեռքի էլեկտրական սղոց | 5 | |
| 15.8 | Ձեռքի էլեկտրական շաղափ | 5 | |
| 15.9 | Ձեռքի էլեկտրական հղկիչ | 5 | |
| 15.10 | Սեղանի էլեկտրական հղկիչ | 3 | |
| 15.11 | Խառատոցների հավաքածու | 5 | |
| 15.12 | Ներքին և արտաքին պարուրակահան գործիքների հավաքածու | 5 | |
| 15.13 | Դիզելային շարժիչի տեստեր | 3 | |

| | | | |
|---|---|---|---|
| 15.14 | Մեքենայի էլեկտրական սարքերի ստուգման ստենդ | 2 | |
| 15.15 | Ավտոյուղի փոխման սարք | 3 | |
| 15.16 | Մարտկոցի լիցքավորման սարք | 2 | |
| 15.17 | Փականագործական դազգահ մամլակով | 5 | |
| 15.18 | Օդամղիչ, կոմպրեսոր | 3 | |
| 15.19 | Տախոմետր | 2 | |
| 15.20 | Ձեռքի էլեկտրական մկրատ | 2 | |
| 15.21 | Մետաղահատ հաստոց | 1 | |
| 15.22 | Հիդրավլիկ ամբարձիչ | 1 | |
| 15.23 | Սեղանի հիդրավլիկ մամլիչ | 1 | |
| 16 | Կուլտիվատոր | 1 | |
| 17 | Խոտհավաք 4 անիվով | 1 | |
| 18 | Գյուղատնտեսության մեքենայացման թեմայով գործնական ուսուցման համար նախատեսված դասասենյակի կահույք | | |
| 18.1 | գրասեղան | 10 | |
| 18.2 | ուսումնական աթոռներ | 20 | |
| 18.3 | ուսուցչի գործնական առաջադրանքների համար նախատեսված աշխատանքային նստարան | 1 | |
| 18.4 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 18.5 | ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 18.6 | ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահելու համար նախատեսված շարժական պատվանդան /տումբա/ | 1 | |
| | **«Կենդանիների առողջություն, արտադրություն և բուծում» առարկայի ուսումնական արհեստանոց** | | **12,411,400** |
| 1 | Անասնաբուժական սեղան 1 | 1 | |
| 2 | Անասնաբուժական սեղան 2 | 1 | |
| 3 | Անասնաբուժական սեղան՝ գործիքների հավաքածուների, դեղորայքի և սպառման նյութերի համար | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | «Ռեկտալ հետազոտություն և կովի արհեստական բեղմնավորում» ինտերակտիվ ուսումնական համալիր | 1 | |
| 5 | Անասնաբուժական վիրահատական գործիքների հավաքածու՝ փոքր կենդանիների համար | 1 | |
| 6 | Անասնաբուժական վիրահատական գործիքների հավաքածու՝ միջին չափսի և խոշոր կենդանիների համար | 1 | |
| 7 | Անասնաբուժական լամպ՝ ճկվող ոտիկով | 2 | |
| 8 | Բինօկուլյար մանրադիտակ | 1 | |
| 9 | Դյուրակիր «LCD» պրոյեկտոր | 1 | |
| 10 | Համակարգիչ բոլորը մեկում | 1 | |
| 11 | Լաբորատոր դասասենյակի հիմնական կահույք | | |
| 11.1 | Ուսանողական գրասեղան | 10 | |
| 11.2 | Ուսանողական աթոռ | 20 | |
| 11.3 | Ուսուցչի գրասեղան | 1 | |
| 11.4 | Ուսուցչի աթոռ | 1 | |
| 11.5 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 11.6 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 2 | |
| 11.7 | Ուսումնական նյութերը եւ սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան /տումբա/ | 1 | |
| | **Կահույք** | | **35,365,000** |
| 1 | Սեղան աշակերտական քիմիական լաբորատորիայի համար 1300*700*760 | 11 | 385,000 |
| 2 | Սեղան աշակերտական 1300*700*760 | 69 | 1,725,000 |
| 3 | Աթոռ աշակերտական 400*400*460 | 264 | 2,640,000 |
| 4 | Սեղան ուսուցչի 1200*600*760 | 30 | 1,200,000 |
| 5 | Կիսափափուկ աթոռ 400*400*460 | 98 | 2,450,000 |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Սեղան աշակերտական գծագրության 900*600*734-854 | 60 | 2,100,000 |
| 7 | Գրապահարան 900*450*2000 | 74 | 7,400,000 |
| 8 | Գրատախտակ 3000*1500 | 17 | 510,000 |
| 9 | Ստելաժ երկկողմանի գրադարանի համար 884*450*1880 | 24 | 1,440,000 |
| 10 | Ստելաժ միակողմանի գրադարանի համար 884*225*1880 | 16 | 800,000 |
| 11 | Սեղան պատրաստատուկագործի համար 1200*700*900 | 8 | 400,000 |
| 12 | Սեղան աշակերտական ինֆորմատիկայի կաբինետի համար 900*800*760 | 15 | 375,000 |
| 13 | Աթոռ կիսափափուկ,պտտվող բարձրության կարգավորմամբ 370*400*360-480 | 15 | 600,000 |
| 14 | Ստորին սեկցիայով լվացարան վերևի սեկցիա դարակ 886*438*1824 | 28 | 4,200,000 |
| 15 | Սեղան ամբիոն գրքերը բաժանելու համար 1152*717*897 | 1 | 80,000 |
| 16 | Սեղան ցուցադրական քիմիայի համար 2400*750*900 | 1 | 80,000 |
| 17 | Աթոռ դահլիճի համար 500*500*360 | 160 | 4,000,000 |
| 18 | Սեղան ցուցադրական ֆիզիկայի և կենսաբանության կաբինետի համար 2400*750*900 | 4 | 320,000 |
| 19 | Սեղան աշակերտական ֆիզիկայի և կենսաբանության կաբինետի համար 1300*700*760 | 22 | 1,320,000 |
| 20 | Կավճա մագնիսային գրատախտակ 2250*1000 | 1 | 20,000 |
| 21 | Գրասեղան պահարանով 1540*750*760 | 13 | 1,300,000 |
| 22 | Սեղան կցորդ 950*750*760 | 13 | 1,300,000 |
| 23 | Գրասեղան պահարանով 1900*800*760 | 2 | 240,000 |
| 24 | Սեղան կցորդ 1480*900*760 | 2 | 220,000 |
| 25 | Գրասեղան պահարանով 2100*800*760 | 1 | 130,000 |
| 26 | Սեղան կցորդ 2280*900*760 | 1 | 130,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **156,520,200** |

| Պետական մարմին | Կազմակերպություն |
| --- | --- |
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011040145<br>ՀՎՀՀ 02698732 | «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ» հիմնադրամ<br>Ք.Վանաձոր, Ուսանողական 9<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչության<br>Հ/Հ 900238000567<br>ՀՎՀՀ 06927275 |
| Գլխավոր քարտուղար՝<br>____________<br>Գ. Սաֆարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | Տնօրեն՝<br>____________<br>Վ. Սիմոնյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |